



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2194

241

U - 98

241
V-98

ՍՈՒՐԲ ԳԻՐՔՆ

30

Ի՞ ՞ ՞ Ա Վ Ր Վ Ե Լ Ո Ւ Ւ

ՄԻՍԴՅՐ ՄՈՒՏԻՒ ՔԱՐՈՉՆԵՐԻՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

“Ես բոլոր ժողովները մէ մարդու իշ ուկ” Զուրէ
 որպէս առջևոց եղան հասպարաւին մէջ ժողովածոյան, ա-
 նչորսս որպէտին ըսին, “որ Առջևեւին օքինաց էիւ+ը բերէ,
 որ որ Տերը Խորայէլն պատրուիրած էր : Ու Եօնները բ-
 ամսուն առջէ օքը՝ Ազգաս +ահաման օքինաց էիւ+ը ժողովին
 առջևոց բերու, որ երի ու նիկ մարդուն, ու առջէն
 լուսու ու հասկնալու խորոշութեան առեցողներէ բաղկա-
 ցած էր . և զանիկ Զուրէ որպէս առջևոց եղան
 հասպարաւին մէջ առաջուցնէ միւն կու օքը երի ու նիկ
 մարդոց ու հասկնալութեան առջևոց խորտաց . և բոլոր
 ժողովները էրնեց աչածները օքինաց էրին պուեր են :
 Նէեւ . ը . 4—3 :

Այս բանը պատահեցաւ Խորայէլի որդւոց
 եօթանասնամեայ գերութենէն ետքը, երբ ա-
 նոնք նորէն իրենց երկիրը եկած էին : Վերի
 համարներուն մէջ նկարագրուած է բոլոր ժո-
 ղովուրդին մէկտեղ ժողվուիլը Տէրոջը խօսքը
 լսելու համար : Մեղի ալ շատ օդտակար կ'ըւ-
 լար, եթէ սովորութիւն ընէինք, մասնաւորա-


պէս Աստուծոյ խօսքին ընթերցումը եւ բացատրութիւնը լսելու համար ստէպ ժողովները ընել։ Լաւ է Աստուծոյ լսել քան մարդկան։

Խորայէլի որդիքը երկար ատեն օտար երկրի մէջ մնացած էին, և Աստուած կ'ուզէր որ անոնք իր օրէնքը գիտնային։ Այս պատմութեան մէջ ըսուած է թէ, «բոլոր ժողովուրդը իրենց ականջները օրինաց գրքին տուեր էին»։ ըսել է թէ գէպ առաջ ծռելով խօսքերը կը խմէին իբրեւ ջուր։

Տեսած էք թէ, երբ մայր թռչուն մը իր ձագերը կերակրելու համար բերանը փոքրիկ որդ մը ունենալով բոյնը կու դայ, ինչպէս ձագերն իսկոյն իրենց գլուխները վեր կ'առնեն եւ բերանները լսյն կը բանան։ Նմանապէս մենէ ամէն մէկը պարտի լսյն բանալ իր ականջները, երբ Աստուծոյ խօսքը կը կարդացուի, որպէս զի ըմբռնէ անոր ամէն մէկ իմաստը, և եթէ կայ բան մը զոր չի կընար հասկնալ, պարտի պաշտօնէին երթալ եւ մեկնութիւնը ինդրել։

Այս գլխոյն 9, 10 համարներուն մէջ գըրուած է, «Բոլոր ժողովուրդը կու լսյին՝ երբոր օրէնքին խօսքերը կը լսէին։ Եւ անոնց ըսաւ, գացէք պարարտ բաներ կերէք ու անուշ բաներ խմեցէք, ու պատրպատութիւն չունեցողներուն բաժինները խրփցէք, քանզի այս

53013-4-1



օրս մեր Տէրոջը սուրբ օր մըն է, ու մի տըրտմիք . վասն զի Տէրոջը ուրախութիւնը ձեր զօրութիւնն է։» Եղբարք, այսօր մեր պէտքն ալ ճիշդ այս է, զուարթ եկեղեցի մը։ Եթէ, ինչպէս Հրեայք բաբելոնի գերութեան ատեն կ'ընէին, մեր քնարներն ուռիներէ կախենք, եւ մեր գլուխները գետին խոնարհեցնելով ապրինք, անհնար է որ յաջողինք մարդիկ Քրիստոսի առաջնորդելու։ Ես գացող եկեղեցի մը աշխարհի առջեւ ուրիշ բան չէ եթէ ոչ գլորման քար։ Եօմնեւտասներորդ համարին մէջ գրուած է թէ այն օրը «խիստ մեծ ուրախութիւն եղաւ։» Միշտ մեծ ուրախութիւն կ'ըլլայ, երբ ուխտազանց ժողովուրդ մը նորէն Աստուծոյ կը գառնայ։

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ ՄՐՏԻՆ ՄԷՋ

Երբ Խարսյելացւոց թշնամիները զանոնք օտար երկիր գերի կը տանէին, երեմիա մարդարէ Աստուծոյ խօսքին վրայ խօսելով կ'ըսէր, «Զանիկա չյիշեմ, և մէյմըն ալ անոր անունովը չխօսիմ։ բայց (այն խօսքը) սրտիս մէջը վառած կրակի պէս եղաւ՝ ուկորներուս մէջ գոցուած։ և յոդնեցայ զանիկա կրելէն ու ալ չեմ կընար։» Երեմ. ի. 9։ Արդարեւ լսւ է որ Աստուծոյ խօսքը մեր սրտերուն մէջ ըլլայ և մեզ այրէ,

38822-67

այնպէս որ չկարենանք լուռ կենալ։ Աազմու-
մերգուն կ'ըսէ . «Բու խօսքերդ իմ սրտիս
մէջ պահուած են»։ Այս բանին վրայ կրնանք
ըսել, ինչպէս ըսաւ մէկը, թէ Աատուծոյ խօս-
քը սրտին մէջ պահել աղէկ բան մը աղէկ տեղ
և աղէկ նպատակի համար պահել է . Երբ
Աատուծոյ խօսքը մարդուս սրտին մէջ իրրեւ
կրակ կը վառի, անատեն մարդ չի կրնար ինք-
զինք բռնել։ «Միթէ իմ խօսքս կրակի պէս
չէ», կ'ըսէ Տէրը, «ու ապառաժը կոտրող մուր-
ճի պէս չէ»։ Աատուծոյ խօսքը Հոգւոյն Սրբոյ
սուրն է, եւ եթէ դարձի եկող Երիտասարդք
կ'ուզեն Աատուծոյ գործին մէջ աշխատիլ, պար-
ախն Աատուծոյ խօսքովը սնանիլ։ Մինչ նոր
արթնցած են, կրնան շատ օգտակար փորձա-
ռութիւններ ստանալ, և զանոնք այլոց պատ-
մելով կրնան օգուտ ընել։ Բայց եթէ իրենց
փորձառութիւնները պատմելէն ուրիշ բան չեն
ըներ, անոնց պատմութիւնն անհամ և անօ-
գուտ կ'ըլլայ, և ժողովուրդը կը յոգնի միեւ-
նոյն բանը յաճախ լսելով, Նոր դարձի եկողները
թող պատմեն թէ ինչպէս դարձի եկան, բայց
հոն չկենան, այլ Աատուծոյ խօսքը կարդալով
զիրենք սնուցանեն . Ակը մենք չենք, այլ Աա-
տուծոյ խօսքն է . և եթէ շարունակ այն ակին
խմենք, շատ դիւրին կ'ըլլայ մեզի անոր
վրայ խօսիլ ուրիշներուն, եւ ոչ միայն այսշափ,

այլեւ միշտ չնորհաց մէջ կ'աճինք, և ուրիշ-
ները կը տեսնեն մեր բարի վարքը և կենցա-
ղավարութիւնը։ Երբէք տեսած չեմ մէկը որ
առանց պարապելու Սուրբ Գրոց ուսման՝ օգ-
տակար Քրիստոնեայ մը եղած ըլլայ։ Երբ մէ-
կը գոցելով մէկդի կը դնէ Աատուծաշունչը,
կրնայ ըլլալ որ շատ փափաքի եւ աղօթքով
խնդրէ Աատուծմէ գործածել զանի իր գործին
մէջ . բայց Աատուծ չի կրնար այն անձին մի-
ջոցաւ Երեւելի գործ մը ընել, քանզի շատնիւթ
չկայ անոր մէջ զոր Հոգին Սուրբ արդիւնաւոր
ընէ : Ով որ օգտակար Քրիստոնեայ պիտի ըլլայ,
պարտի կարող ըլլալ Աատուծոյ խօսքը գործա-
ծել, որ Երկայրի սուրէ աւելի հատու է :

Եթէ կարդաք այն քարոզը զոր Մավոչս խօ-
սեցաւ Խորայէլի որդւոց անոնցմէ բաժնուելէն
քիչ մը առաջ, պիտի տեսնէք որ ուրիշ բան չէ
այն, եթէ ոչ պատմութիւն Երեւելի գործերուն
զորս Աատուծ ըրաւ անսոյ համար, ինչպէս
են անոնց ազատութիւնը Փարաւոնի անդութ-
ձեռքէն, անոնց թշնամիներուն կարմիր ծո-
վուն մէջ կորսուիլը և անապատին մէջ անոնց
ճամբորդութիւնը . Սակայն չեմ կարծեր թէ
բանակին մէջ փոքր տղայ մը անդամ կար որ
գոնէ տասն անդամ լսած չէր այս բաները .
Յեսու ևս նոյնպիսի պատմութիւն մը ըրաւ .
Պետրոս ալ Պենտէկոստէի օրը, Երբ Հոգւով

Սրբով լեցուած ոտքի վրայ ելաւ, Սուրբ Գիրքէն ժողովուրդին վկայութիւն բերաւ, և այս էր նետը որ գնաց ծակեց անռնց սիրտերը: Եւ գարձեալ ի՞նչ ըրաւ Ստեփաննոս Վկան երբ պիտի քարկոծուէր, ո՞չ ապաքէն Արքահամու ժամանակէն մինչեւ ետքը Սուրբ Գիրքէն բաներ պատմեց և զանոնք բացատրեց:

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔՈՎԸ ՑԱՂԹՈՒԹԻՒՆ

Մարգիկ միշտ կ'ըսեն. Նոր բան, նոր վարդապետութիւն, նոր գաղափար կ'ուղենք: Բայց գիտցած ըլլաք, բարեկամներս, որ, եթէ Աստուծոյ խօսքէն կը ձանձրանաք այնպէս որ այն խօսքը ձեզի բեռ կ'ըլլայ, Աստուծոյ հաղորդակցութենէն կտրուած էք: Ձեզի համար հարկաւոր է որ մէկը ձեզի պարզէ և մեկնէ Սուրբ Գրոց խօսքերը: Մենք չենք կրնար յաղթել Սատանային մեր զգացմանց միջոցով: Շատերուն այս մասին անյաջող ըլլալուն պատճառը սա է որ, կ'աշխատին յաղթել գիւխն իրենց զգացմանց և իրենց փորձառութեանց միջոցով: Քրիստոս Աստուծոյ խօսքին միջոցով յաղթեց Սատանային: Այն պատասխանը զոր Տէրը տուաւ Սատանային՝ պարզապէս այս էր, « Գրուած է»: և

գարձեալ երկրորդ անգամ ըսաւ, « Գրուած է»: և երբ Սատանան նորէն եկաւ և ջանաց Սուրբ Գիրքէն սխալ վկայութիւններ բերելով Տէրովը յաղթել, Քրիստոս գարձեալ ըսաւ, « Գրուած է»: և ահա այս էր նետը որ գնաց ճիշդ տեղը զարկաւ և փախուց փորձիչը: Սատանան բնաւ բանի տեղ չի դներ մեր զգացումները, մանաւանդ կը խաղայ անռնց հետ ինչպէս որ նուագածուն կը խաղայ քնարին թելերուն հետ: Սատանան կրնայ մեր զգացումները վարել ըստ հաճոյս, և զանոնք աղէկ կամ գէշ ընել. կրնայ մեզ ուրախութեան լերան գագաթը հանել, կամ մեղ տիրութեան խոր ձորերը իջեցնել. և մենք կրնանք անոր յաղթել միայն զօրութեամբ Աստուծոյ խօսքին, որ Հոգւոյն սուրն է: Մի մոռնաք նաեւ սա ուրախալի բանը որ, աշխարհիս վրայ չկայ վիճակ մը որոյ համար միփթարական խօսք մը չգտնուի Սուրբ Գրոց մէջ: Եթէ մէկը կը վշտի մէջ է, կան այնպիսւոյն համար խոստումներ. եթէ փորձութեան և ձախորդութեան մէջ է, այնպիսւոյն համար ալ կան խոստումներ: Ուրախութեան և տրտմութեան, առողջութեան և հիւանդութեան, աղքատութեան և հարստութեան, միով բանիւմ մարդկային կենաց բոլոր պարագաներուն համար կան աստուածատուր խոստումներ և միփթարութիւններ Աստուծոյ խօսքին մէջ:

ԵՐԵՅ ԳՐԵՍՆՔ ԶՈՐՄ ԱՄԷՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
ՊԱՐՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Թերեւս ոմանք հարցնեն . ի՞նչպէս կրնանք
մեր սրտերուն մէջ սէր ծնուցանել դէպի ի
Սուրբ Գիրքը : Ասոր սա պատասխանը կու-
տամ . ջուէք զձեղ անոր ուսմանը , և Աստու-
ծոյ օգնութիւնը ինդրեցէք : Աստուած ստու-
դիւ պիտի պարզեւէ ձեզի այն սէրը :

Երեք գիրք կան զորս ամէն քրիստոնեայ
պարտի ունենալ : Առաջինն է Սուրբ Գիրքը :
Մաքուր աստուած գեղեցիկ Աստուածաշունչ
մը ունենալ շատ կարեւոր կը համարիմ : Չեմ
հաւնիր այն փոքր Աստուածաշունչերուն ո-
րոնց գիրերն այնպէս մանր են , որ կարդալու
համար պէտք է գիրքը շատ մօտ բանել աչ-
քերուն , այնպէս որ եթէ եկեղեցին քիչ մը
մութ է , գիրերն ամեննեւին չեն տեսնուիր ո-
րոշ , և մարդ ուրիշ բան չունենար իր առ ջե-
նթէ ոչ խառնաշփոթ բառեր : Ոմանք կ'ըսեն ,
Այս , այնպէս է , բայց մեծ Աստուածաշունչ մը
ծոց չի գրուիր : Աղէկ , թող թեւի տակ առ-
նուի , և անատեն տունէն մինչեւ եկեղեցի
ճամբուն վրայ լաւ քարող մը տրուած կ'ըլլայ :
Ծանօթներէս մին տեսնելով որ ուրիշ մը Աս-
տուածաշունչը թեւին տակ եկեղեցի կ'եր-

թար՝ իր անհոգութեան վրայ դղաց և
դարձի եկաւ : Շատերը խոշոր աղօթագիրքեր
կը տանին իրենց թեւերուն տակ և չեն ա-
մընար . իսկ Աստուածաշունչը բոլոր աղօթա-
գիրքերուն չափի , և աւելի եւս յարգի և պա-
տուական է : Եթէ Աստուածաշունչդ մաքուր
և գեղեցիկ է , աւելի ինամով կը պահես զայն:
Գիցուք թէ մաքուր և գեղեցիկ Աստուածա-
շունչի մը համար բաւական ստակ տուիր . եր-
թալով աւելի քաղցր և սիրելի պիտի ըլլայ
գեղի այն գիրքը : Սա ալ կ'ըսեմ քեղի . շատ
մեծագին Աստուածաշունչ մի գներ , դուցէ
ինայես անոր լուսանցներուն վրայ բան նշա-
նակել :

Աստուածաշունչն ետքը , ըստ իս , Քրիս-
տոնեան ունենալու է Համարսրբառ մը և
Հաւաքում մը վկայութեանց Սուրբ Գորոց :
Այս գիրքերը շատ պիտի նպաստեն ձեզի Աս-
տուածոյ խօսքն օգտակար կերպով ուսանելու :
Եթէ այս գիրքերը չունիք , ջանացէք որչափ-
հնար է շուտով զնել անսոնցմէ մէյմէկ օրինակ :

ՄԱՍՆԱԽՈՐ ՆԻԹԵՐ ՔՆՆԵԼ ԵՒ ՈՒՍԱՆԵԼ

Բատ իս , Սուրբ Գիրքն ուսանելու լաւագոյն
կերպն է անոր մէջէն մասնաւոր նիւթեր զա-
տել , քննել և միտք առնել :

Ես ժամանակ մը սովոր էի ամէն օր Սուրբ Գիրքէն այսչափ գլուխ կարդալ: Եւ եթէ այս պէս չընէի, ինծի կը թուէր թէ ցրտանալու և ետ երթալու վրայ էի. սակայն խոստովանելու եմ որ եթէ երկու ժամ ետքը մէկը հարցընէր ինծի, Ի՞նչ կարդացիր, չէի կրնար պատավսան տալ. ինչ որ կը կարդայի՝ կը մոռնայի շուտով: Պատանեկութեանս ատեն, բաց ուրիշ գործերէ, կ'աշխատէի նաեւ հողագործի մը քովլ. բայց այնպէս աճապարանօք և անհոգութեամբ կը գործէի, որ կը ստիպուէի փայտ մը ցցել հոն մինչեւ ուր որ կը բրէի, հետեւեալ առողուն գործուած հոգը շգործուածէն որոշելու համար: Ամէն օր Սուրբ Գիրքէն քանի մը գլուխ աճապարելով կարդալս ալ ասոր նման էր: “Տիկին,” կը հարցընէ այր մը իր ինոջը, երբ ընտանեկան աղօթքի կը կը նստին, “այս ինչ գլուխը կարդացի՞նք:” “Իրաւ որ չեմ յիշեր,” կ'ըսէ կնիկը: Երկուքն ալ չեն յիշեր: Թերեւս այսպէս միենոյն դլուխը կը կարդան քանի մը անդամ, և կը կարծեն թէ այս կերպով կը սորվուի Սուրբ Գիրքը: Ըստ իս, չկաց գիրք մը որ այնչափ հարեւանցի կը կարդացուի որչափ Սուրբ Գիրքը: Ոմենեւին օգուտ չունի Աստուածաշունչը լոկ կարդալով անցնիլ, առանց միտք առնելու ինչ որ կարդացուեցաւ, և փափաքով

ու շարունակ վինտուելու անոր մեծամեծ ճշշմարտութիւնները: Դիցուք թէ մարդ մը տեսնելով որ այս չէնքին մէջ ասդին անդին պտտելով ամէն կողմը կը դիտեմ, մօտենայ ինծի և ըսէ. «Բարեկամ, ի՞նչ կը նայիս չորս կողմը, բան մը կորուսի՞ր:» Եւ ես ըսէմ, “Ոչ, բան չկորուսի, և բան չեմ փնտուեր:” Այն մարդը զիս անտարակոյս յիմար պիտի կարծէ: Բայց, ընդհակառակն, եթէ ըսէի, “Ոյո, բարեկամ, ստակ կորուսի և զայն կը փնտուեմ,” մարդը պիտի հասկնար գործը, և ինծի պիտի օգնէր ստակը գտնելու: Բարեկամներս, Սուրբ Գիրքը կարդացէք որպէս թէ անոր մէջ մեծադին բան մը կը փընտուէք: Լաւ է գլուխ մը միայն կարդալ և անոր վրայ ամիս մը խորհիլ, քան մէկ ամսուան մէջ ամբողջ Աստուածաշունչը կարդալ առանց բան մը միտք առնելու:

ՄԱՍՆԱՒՈՐ ՆԻՒԹԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԱՊԵՍ ՈՒՍԱՆԻԼ

Ոմանք կը պարծին թէ ամբողջ Աստուածաշունչն այսչափ քիչ ամսուան մէջ կարդացին: Ոմանք ալ գլուխ գլուխ կը կարդան և մէկ տարուան մէջ կը լմնցնեն Սուրբ Գիրքը: Ըստ իս, լաւագոյն և օգտակարագոյն է մէկ դլսոյն վրայ ամբողջ տարի մը խորհրդա-

ծել։ Եթէ դատ մը ունենալով ուղի դատաւ ւորներն իմ կողմն շահիլ, բոլոր ոյժս կու տայի այն կէտին զոր յատկապէս կ'ուղի հաստատել։ Վկաներ կը բերէի, ոչ թէ ուրիշ կէտեր հաստատելու, այլ յատկապէս այն կէտը որուն վրայ կ'ուղի թէ դատաւորներս համոզուեին։ Նոյնպէս երբ Սուրբ Գիրքը կը կարգանք, մեր ուշադրութիւնը մասնաւոր կէտի մը տալու ենք, մինչեւ որ այն կէտը կատարելապէս հաստատուի մեր միտքերուն և սըրտերուն մէջ։

Ատեն մը ես «Աէր» բառն ընտրեցի, և չեմ գիտեր քանի շաբաթ աշխատեցայ քննել և սորվիլ Սուրբ Գրոց այն համարներն ուր այս Մէր բառը կը դանուի։ Արդիւնքը սա եղաւ որ, հիմա չեմ կրնար չափել զմարդիկ։ Միրոյ խնդրոյն վրայ այնչափ երկար խորհեցայ որ ենծի բնութիւն եղաւ որ և իցէ մարդու բարիք ընել։ Դուք ալ ընտրեցէք «Ճնորհը» բառը, կամ «Հաւատք» բառը, կամ «Քրիստոնէական աներկրայ վստահութիւն առ Աստուած» բառերը։ Ոմանք կ'ըսեն, «Չենք հաւատար այս աներկրայ վստահութեան»։ Ես տեսած չեմ մարդ մը որ Աստուածաշունչ ուշադրութեամբ կը կարդայ և այն վստահութեան չի հաւատար։ Այն օրհնեալ գիրքն ասկէ ուրիշ բան չի սորվեցներ։ Պօղոս կ'ըսէ, «Գիտեմ որու եմ հաւա-

տացեր»։ Յոք կ'ըսէ, «Գիտեմ որ իմ ֆրկիչո ողջէ»։ Այս խօսքերը բացարձակ վստահութիւն կը նշանակեն և երկրայութեան բնաւ տեղի չկայ անոնց մէջ։ Սրբազն մատենագիրը չըսեր ։ «Կը յուսամ, կը հաւատամ»։ այլ «Գիտեմ»։ Այս նիւթին վրայ ամենէն աղէկ գրուած կը դտնենք նամակի մը մէջ որ Յովհաննու գըշէն է։ Յովհաննէս այս վստահութեան վրայ գրեց այն նամակը։ Անոր խօսքերուն մէջ երբեմն այն պիտի բառ մը կը գտնես որ բանակի կ'ըլլայ ամբողջ նամակին և կը պարզէ զայն։ Բաց Յովհաննու Աւետարանին Գլ. 1. 31 համարը, հօն պիտի գտնես սա խօսքը։ «Ասոնք գրուեցան, որ հաւատաք թէ Յիսուսը Քրիստոսն է։ Աստուծոյ Որդին, և որ հաւատալով կեանք ունենաք անոր անունովը»։ Բաց հիմա նոյն առաքելոյն առաջին թուղթին Գլ. Ե. 13 համարը։ Հօն ալ կը գտնես սա խօսքը։ «Այս բաները գրեցի ձեզի՝ որ գիտնաք թէ յաւիտենական կեանք ունիք դուք՝ որ Աստուծոյ Որդւոյն անուանը կը հաւատաք»։ Այս բոլոր նամակն այն վստահութեան վրայ գրուած է։ Տարակոյս չունիմ որ Յովհաննէս տեսած էր մարդիկ որ տարակոյս ունէին քրիստոնէական աներկրայ վստահութեան վրայ, և կը կասկածէին թէ արդեօք փրկուած են թէ ոչ։ Յովհաննէս գրե-

չը կ'առնէ և կ'ըսէ , “Ես կը լուծեմ այս
խնդիրը ,” և իր Աւետարանին ի . գիսյն մէջ
այն վերջին համարը կը դրէ : Ես ալ լսած
եմ որ ոմանք կ'ըսեն , “Մեզի տրուած չէ
դիսնալ մեր փրկուած ըլլալը :” Ասոնք թե-
րեւս պաշտօնէէ մը լսած են թէ ոչ ոք կըր-
նայ դիսնալ թէ փրկուած է թէ ոչ : Այս-
պիսիք փոխանակ բռնելու Աստուծոյ խօսքը ,
պաշտօնէին խօսքը կը բռնեն : Շատերն ալ
Աստուածաշունչը կը կարդան անկէ վկայու-
թիւններ քաղելու համար , որպէս զի հաս-
տատեն այն գաղափարները որ իրենց սիրելի
են , և եթէ Սուրբ գիրքը չի հաստատեր զա-
նոնք , կը թողուն և չեն կարդար : Մէկուն սա
խօսքը ճշմարիտ է . “Սուրբ գիրքը կարդալու
չենք երիցականութեան կապոյտ լուսովը , կամ
Մեթոտականութեան կարմիր լուսովը , և կամ
Եպիսկոպոսականութեան մանուշակագոյն լու-
սովը , այլ կարդալու ենք զայն Աստուծոյ Հոգ-
ոյն յատակ և պայծառ լուսովը :” Արդ , Քրիս-
տոնեայ , առ Աստուածաշունչը ձեռքդ և
շաբաթ մը քննէ ու սորվէ այս աներկբայ վըս-
տահութեան խնդիրը . շատ որոշ կերպով պի-
տի տեսնես որ , քեզի տրուած է դիսնալ թէ
Աստուծոյ զաւակ ես թէ ոչ :

ԽՈՍՏՈՒՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԽՈԿԱԼ

Հիմա ուրիշ նիւթ մը առնենք , զոր օրինակ
Աստուծոյ խոստու մները : Թողլ Քրիստոնեայ մը
ամիս մը քննէ Աստուծոյ խոստու մները և խո-
կայ անոնց վրայ , այնուհետեւ այլեւս պիտի
չըսէ թէ խեղճ և աղքատ եմ : Թերեւս շատ
անդամ լսած էք ոմանց գանդատը , “Ճկար
ենք , շատ տկար ենք :” Բարեկամներս , գան-
դատելու բանը տկարութիւնը չէ , այլ ծուլու-
թիւնը : Եթէ , ծննդոց գիրքէն մինչեւ Յայտ-
նութիւն , Սուրբ գիրքը կարդալով գիտես այն
խոստու մները դորս Աստուած ըրած է Արքա-
համու , խսահակայ , Յակոբայ , Հրէից , հե-
թանոսաց և անոնց որ Աստուծոյ ժողովուր-
դըն են , և ամիս մը որոճաս այն պատուա-
կան խոստմանց վրայ , այնուհետեւ գլուխդ-
կնիւնի պէս գետին պիտի չխոնարհի և պի-
տի չդանդասիս տկարութենէդ , այլ ամենայն
վստահութեամբ գլուխդ վերցնելով բարձրա-
ծայն պիտի գովես Աստուծոյ շնորհքին մեծու-
թիւնը , քանզի պիտի ստիպուիս այնպէս ը-
նել : Շիգակոյի մեծ կրակէն ետքը մարդ մը
ինծի եկաւ և ըսաւ , “Մուտի , լսեցի որ Շի-
գակոյի կրակին բոլոր ստացուածքդ կորու-
սիր :” “Կ'երեկի թէ սխալ տեղեկութիւն
տրուած է քեզի ,” պատասխանեցի : “ Իրա՞ւ

կ'ըսես,” ըսաւ այն անձը, “ես լսեցի թէ ա-
մէն բան կորուսած ես:” “Ոչ, սխալ է,” ը-
սի, “բոլորովին սխալ:” “Շատ բան մնաց
ձեռքդ”, հարցուց բարեկամն : “Այս,” պա-
տասխանեցի, “մնացածներն աւելի շատ են
քան կորսուածները, թէպէտ չեմ կրնար ը-
սել թէ որչափ բան կորուսի:” “Շատ ուրախ
եմ, Մուտի”, ըսաւ միւսը, “չէի գիտեր թէ
կրակէն առաջ այսչափ հարուստէիր:” “Այս,”
ըսի, “ես շատ աւելի հարուստ եմ քան զոր
դուն կը կարծես, և ահա ստացուածոյ մուր-
հակներս: Ան որ կը յաղթէ, ամէն բաները
պիտի ժառանգէ:” Կ'ըսեն թէ Ոռչիլա կո-
չուած հարուստ Հրեայ սեղանաւորները չեն
կրնար ըսել թէ որչափ հարստութիւն ունին:
Ես ալ ճիշդ անոնց պէս եմ: Աշխարհիս վրայ
ամէն բան իմա է: Ժառանդակից եմ Աստու-
ծոյ Որդւոյն Յիսուսի:

Ամիս մ'ալ “Աղօթքի” վրայ քննութիւններ
ըրէ . վնտուէ թէ Սուրբ գրոց մէջ այս նիւ-
թին վրայ ինչ բաներ ըսուած են: Անտարա-
կյս Աստուածաշունչը քեզի նոր գիրք մը պի-
տի թուի: Նոյնպէս ընարէ “Յոյս”, “Հա-
ւատք”, “Շնորհք” բառերը, և ասոնց վրայ
քննութիւններ ըրէ: Ժամանակ մը շնորհքի
վրայ քննութիւններ կ'ըսէի, և այնպէս լեց-
ուած էի ասոր վերաբերեալ խորհուրդներով,

որ, զով որ կը տեսնէի, այր կամ կին, կը
նկարագրէի անոնց թէ Աստուած որչափ կը
սիրէ զանոնք: Երբ Քրիստոս իր շնորհաց ա-
ւետիսը քարոզեց Հրէից, Հրեայք չընդունե-
ցին այն աւետիսը, բայց շնորհքը չարգելուեցաւ
և սկսաւ թափիլ հեթանոսաց վրայ: Կրնաք
աղօթել և խնդրել Աստուծոյ շնորհքը, սակայն
եթէ Սուրբ գիրքը կը թողուք, չէք կընար
ընդունիլ այն շնորհքը:

ԱՍՏՈՒՄԱՇԱՇՈՒԽՉԻՆ ԱՄԷՆ ՄԷԿ ԳԻՐՔԸ ԶԱՏ
ԿԱՐԴԱԼ ԵՒ ՔՆՆԵԼ

3892-67 Սուրբ գիրքը սորվելու մէկ կերպն ալ անոր
իւրաքանչիւր գիրքը զատ կարգալ ու քննելն
է: Օրինակի համար, առ Ծննդոց գիրքը, որ
բոլոր Սուրբ գրոց սերմարանն է: Այս գիրքը
կը խօսի մեղի կենաց, մահուան և յարութեան
վրայ, և Սուրբ գրոց մնացեալ մասերն անկէ
կը բղիսն: Եւ կամ քննէ Աստուածաշունչին
գիրքերէն մէկուն մէջ ստէպ կրկնուած բառ մը:
Ժամանակաւ ես Յայտնութեան գիրքին եօթն
երանութիւններն ընտրելով և զանոնք քննե-
լով շատ օգուտ տեսայ: Շատերը մութ եւ
գժուարին կը համարին Յայտնութեան գիրքը,
եւ կ'ըսեն թէ ամէն մարդ չի կրնար զայն
հասկաւ: Սակայն եթէ Աստուած չուզէր որ այն
գիրքը հասկնոցինք, լայն չերպար մեղի:

ՀԱՅՈ-ԱԲՐ ՀՀ

Ա. ՄԱՅԱԼԻՆԻ
ԱՅԱԽԱՎԱԿԱՆ ԱՆԴՐԻ

Դուն սկսէ կարդալ և քննել զայն, կամաց կամաց պիտի սկսիս հասկնալ: Բոլոր Աստուածաշունչին մէջ, կ'ըսէ մէկը, այս գիրքը միայն կը խօսի Սատանային կապուելուն վրայ ։ Սատանան գիտնալով ասիկա, Քրիստոնէից մէջ պատելով անոնց կ'ըսէ . “Յայտնութեան գիրքը կարդալ ձեղի օդտակար չէ, դուք այն գիրքը չէք կրնար հասկնալ, շատ խրթին է:” Այսպէս կը խօսի չարը, վասն զի չուզեր որ դուք այն գիրքը կարդալով իմանաք Սատանային յաղթուիլը . Ո՞հա այն գիրքին մէջ պարունակուած երանութիւնները . “Երանելի են անոնք որ անոր պատուիրանքները կը կատարեն, որ հշխանութիւն ունենան կենաց ծառին վրայ, և դոներէն ներս քաղաքը մտնեն:” Գլուխ իբ . 44 : “Երանի անոր որ արթուն կը կենայ ու իր հանդերձները կը պահէ:” Գլուխ . Ժ. 45 : “Երանի անոր որ կը պահէ այս գրքիս մարդարէութեան խօսքերը:” Գլուխ իբ . 7 : Երանութիւն մ'ալ կայ անոնց որ աշխարհի աղդեցութենէն աղատ են: Մենք, Քրիստոնեայքս, չենք վերաբերիր այս աշխարհի, այլ նոր աշխարհի մը . Աստուած մեղին աշխարհէն դուրս հանեց և դրաւ նորին մէջ, ապա մեր անձը հեռու պահենք աշխարհիս աղդեցութենէն: “Այսուհետեւ երանելի են ան մեռելները՝ որոնք Տէրողմով

կը ննջեն, այո, կ'ըսէ չոգին, որ իրենց աշխատութենէն հանդչին”: Գլուխ Ժ. 43 : “Երանելի և սուրբ է ան որ առջի յարութեանը մէջ բաժին ունի . ասոնց վրայ երկրորդ մահը իշխանութիւն չունի, հապա անոնք Աստուածոյ և Քրիստոսի քահանաները պիտի ըլլան, ու անոր հետ հազար տարի պիտի թագաւորեն:” Գլուխ ի . 6 : “Երանելի են անոնք որ Գառնուկին հարսանեացը ընթրիքին կանչուածեն”: Գլուխ Ժ. 9 : Յայտնութեան մէջ յիշուածեն նաեւ ութ յաղթանակներ . զանոնք քըննութեան առէք, անոնցմէ մեծամեծ օրհնութիւններ և օգուտներ պիտի ստանաք: Անոնք ուղղակի երկինք կ'առաջնորդեն ձեղ, և շետակ Աստուածոյ աթուին քով կը տանին:

ՎԱՏԱՀՈՒԹԻՒՆ

Դարձեալ առնենք “Գիտեմ” բառը զորքիչ մը առաջ յիշեցի: Այս բառը վեց անդամ կրկնուած կը գտնենք Յովիաննու առաջին թղթոյն երրորդ գլխոյն մէջ: Հինգերորդ համարին մէջ կ'ըսէ, “Եւ հիուն որ անիկա անոր համար յայտնուեցաւ, որ մեր մեղքերը վերցընէ . ու իր մէջը մեղք չկայ:”

Յետոյ 19 համարին մէջ կ'ըսէ, “Եւ ասով էս հանչան + թէ ճշմարտութենէն ենք, ու մեր

սրտերուն համարձակութիւնովը անոր առջեւը
պիտի երեւնանք :” Ոմանք կ'ըսեն թէ , սուտն
ալ ճշմարտութեան չափ աղեկ է , միայն թէ
անկեղծութեամբ հաւատանք : Ասիկա ի՞նչ
պէս կրնայ ըլլալ , “վ կը տարակուսի կարմե-
ղոս լերան սուտ մարդարէ : Երուն անկեղծու-
թեանք : Սակայն Յովհաննէս կ'ըսէ , “Ոսով և
ժանձաւ թէ ճշմարտութենէն ենք :” Եւ 14
համարին մէջ կ'ըսէ , “Մենք գէտէն որ մահէն
կեսնքի փոխուեցանք , ինչու որ եղրայրները կը
սիրենք :” Ոհա հոս վատահութեան օրինակ մը :
Յետոյ 15 համարին մէջ կ'ըսէ , “Ամէն ով որ իր
եղրայրը կ'ատէ՝ մարդասպան է . ու գէտէն որ
ամէն մարդասպան իր մէջը բնակած յաւիտե-
նական կեանք չունի :” Քրիստոնեան լեցուած
չէ նախանձու , չարակնութեան , ատելու-
թեան և թշնամութեան ոգւով , այլ սիրոյ ,
խնդութեան , խաղաղութեան , երկայնմոռ-
թեան , քաղցրութեան , բարութեան , հաւա-
տարմութեան , հեղութեան և ժուժկալու-
թեան ոգւով : Այս պտուղները պիտի բերեմ ,
եթէ Քրիստոս իմ մէջս է : Թէ արդեօք մեր
պտուղները ճշմարի՛տ պտուղներ են , գաղա-
տացւոց ե . գլուխը շուտով կ'իմացնէ մեղի :
Ծառը բարի ըրէ , շուտով կը տեսնես անոր
բարի պտուղները : Յետոյ 24 համարին մէջ
Յովհաննէս կ'ըսէ , “Եւ ան որ անոր պատուի-

րանքները կը պահէ՝ անոր մէջը կը կենայ , ու
անիկա ալ ասոր մէջը . և ասկէ գէտէն որ ա-
նիկա մեր մէջը կը կենայ , այսինքն ան չոգիէն
որ մեղի տուաւ” . և 2 համարին մէջ , “Մի-
րելիներ , հիմա մենք Աստուծոյ որդիքն ենք ,
և տակաւին յայտնի չէ թէ ինչ պիտի ըլլանք .
բայց գէտէն որ երբ անիկա յայտնուի , անոր
պէս պիտի ըլլանք . վամն զի անիկա պիտի
տեսնենք՝ ինչպէս որ է :” Ահա աներկրպայ
վատահութեան ուրիշ օրինակ մը : Մէկ գըլ-
խցն մէջ աներկրպայ վատահութեան վեց օրի-
նակ գտանք : Բարեկամք , ամէն ճշմարտու-
թիւն զոր այսպէս քննելով կը դտնեմ և կը
հասկնամ՝ կարծես թէ վրայէս բեռ մը կ'առ-
նէ և կը թեթեւցնէ զիս , մինչեւ թուիլինծի
թէ շուտով պիտի թուշիմ երթամ : Լսած եմ
թէ աղայ մը կազի պարկեր կապելով իր մէջ-
քը , թեթեւցաւ , այնպէս որ երբ ճամբան
փոսի մը կամ ցանկի մը կը հանդիպէր , վեր
նետուելով կ'անցնէր անոնց վրայէն : Աստուա-
ծաշունչին ընթերցումն ալ այսպէս կ'ընէ . եր-
թալով կը թեթեւցնէ մեզ որ կարող կ'ըլլանք
մեղի խոչ եղող արդելքներուն վրայէն թուշելով
անցնիլ : Ճշմարտութիւնը մեղերթալով աւելի
աղատ կ'ընէ : Այս շարթու քրիստոնեայ եղբայր
մը ինծի օգտակար խորհուրդ մը տուաւ Սուրբ
կիրքն հասկնալու : “Պետրոս” , ըստ այս

Եղբայրը, “յուսոյ վրայ կը դրէ, Պօղոս՝ հաւատոց և Յովհաննէս՝ միրոյ։ Հաւատ, յօյս և սէր։ ասոնք են այս երեք առաքելոց էական յատ կութիւնները։” Այս խօսքը բանալիէ անոնց գոռածները հասկնալու։

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԸ

Մեծ օրհնութիւն եղաւ ինձի, և շատ օդուտ քաղեցի Յովհաննու մէջ ստէպ գործածուած “Հաւատալ” բառը քննելով։ Յովհաննէս կ’իւ մացնէ մեզի թէ իր Աւետարանը գրուեցաւ որ հաւատանք և հաւատալով յաւիտենական կեանք ունենանք։ Ուստի Յովհաննու Աւետարանին մէջ ստէպ կը գտնենք “Հաւատա, հաւատա, հաւատա”։” Երբ կ’ուղես մարդ մը համոզել թէ Քրիստոս Աստուծոյ Որդինէ, Յովհաննու Աւետարանը տուր անոր, և այն բաւական է։ Թող մէկ ծայրէն միւսը ուշադրութեամբ և աղօթքով կարդայ։ Մատթէոս Հրեայ էր, և Քրիստոսի վրայ իրերւ Հրէի վրայ գրեց։ Կը նկարագրէ զանի իրերւ դաւթի Որդի, որ կու գայ իր գահընստելու։ Մատթէոսի Աւետարանը կը սկսի Արքահամէն, ու կարդաւ անոր թագաւորական սերունդին վրայ կը խօսի մինչեւ Քրիստոս։ Մարկոս Մաղաքիայէն կը սկսի, այն կէտէն՝ ուր Հին կտակարանը կը վերջանայ, և

կը խօսի Քրիստոսի վրայ իրերւ ծառայի վրայ որ կուգայ Աստուծոյ կամքը կատարելու։ Ղուկաս Զաքարիայէն կը սկսի և Քրիստոսի վրայ իրերւ մարդու վրայ խօսելով կը նկարագրէ զանի իրերւ բժիշկ որ հիւանդները կը բժշկէ, կաղերը կը քալեցնէ և կոյրերուն աչքերը կը բանայ։ Բայց Յովհաննէս գիրիստոս Հօրը ծոցէն կ’իջեցնէ։ Քան զՄաղաքիա, զԱրքահամ և զԱդամ անդին անցնելով, կը համնի մինչեւ առաւելուեան աստղերը, յաւիտենականութեան սահմանները, և զՔրիստոս Հօրը ծոցէն առնելով կը բերէ մեզի։ Անդամ մը գրիչը շարժելով իսպառ կը լուծէ Քրիստոսի Աստուծութեան խնդիրը։ Աստուծոյ Որդին մարմնով յայտնուած է կ’ըսէ։ Ծայրէ ծայր քննէ Յովհաննու Աւետարանը, կարդա անոր “Հաւատա”, “Ճշմարիտ ճշմարիտ”, “Ես եմ” խօսքերը, և նոյն կերպով քննէ բոլոր Աստուծաշունչը մէկ ծայրէն միւսը, պիտի տեսնես որ ստուգիւ դանձէ, և իրերւ նոր գիրք պիտի թուի քեզի։

ՀԱՄԱՌՈՑ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼ
ԱՍՏՈՒԾԱՇԱՇՈՒՆՉՐԻՆ ԼՈՒՍԱՆՑՆԵՐՈՒՆ ՎՐԱՑ

Սուրբ գիրքը սորվելու շատ օդտակար կերպ մ’ալ այս է։ Երբ քարոզ մը մտիկ կ’ընենք, Աստուծաշունչը մը ունենալով մեր ձեռքը,

Համառօտիւն նշանակենք անոր լուսանցին վրայ քարողին բնաբանը և նշանաւոր խօսքերուն իմաստը։ Շատ յարմար միջոց է այս՝ միտք բերելու որ և իցէ քարոզ մը դոր կը լսենք։ Քարողներէ այսպէս այլեւայլ կէտեր համառօտիւն նշանակելու սովորութիւնն է պատճառ որ հիմա կրնամյիշել շատ քարողներ գորս տարիներ առաջ լսած եմ։ Ամէն քրիստոնեայ թող քարողչին խօսքերուն համառօտութիւնը նշանակէ տեղ մը, և յետոյ երթայ ուրիշներուն հաղորդէ։ Որչափ անհոդ մարդիկ կան որ բնաւ եկեղեցի չեն երթար և զուրկ են Աստուծոյ խօսքին միմիթարութենէն։ Մենք պարտինք չորս ականջ ունենալ, երկուք մեղի համար, երկուք ուրիշ մարդոց համար։ Դիցուք թէ նոր տեղ մը գտնուելով ազօթքի ժողովի մը դացիր։ Թերեւս բան մը խօսելու պատրաստութիւն չունիս, բայց կրնաս յիշել գոնէ քարողի մը իմաստը զոր միտքդ պահած ես, և անոր վրայ խօսիլ։ Լսողներն ո՞չչափ ուրախ պիտի ըլլան կենաց խօսքերը լսելով։ Աշխարհք կը կորսուի, վասն զի զուրկ է կենաց խօսքէն։

ՓՈՔՐ ԵՒ ԻՄԱՍՏՈՒՆ

Ութ տարի կայ որ Շիգակոյի մէջ Անդղիացի քարողչէ մը քարոզ մը լսեցի սա հետաքրքրա-

կան բնաբանին վրայ։ “Երկրիս վրայ չորս բան կայ որ պղտիկ են, բայց անոնք շատ խելացի են։” Առակ. կ. 24։ Աղէկ, ըսի մտքէս, այն պղտիկ բաներէն ի՞նչ պիտի հանես։ Ես շատ անդամ տեսած եմ զանոնք։ Քարողիչը յառաջ տարաւ կարդալը. “Մրջիւնները զօրաւոր ժողովուրդ մը չեն, բայց իրենց կերպակուրը ամառուընէ կը պատրաստեն։” “Աստուծոյ ժողովուրդը,” շարունակեց քարողիչը, “մրջիւններուննման է։” Բարի, ըսի մտքէս, ես անոնցմէ բաւական տեսած եմ, բայց ինձի նման մէ կը տեսած չեմ անոնց մէջ։ “Աստուծոյ ժողովուրդը նման է,” ըսաւ քարողիչը, “մրջիւններուն, վասն զի իր գանձը երկինքը դիզելով ապագային համար պատրաստութիւն կ'ընէ։ Սակայն աշխարհ յիմարաբար յառաջ կ'երթայ և կը մոռնայ Աստուծոյ պատուերը որ կը պատուիրէ մեղի համար երկնից մէջ անապական գանձեր դիզել։” “Ճագարները տկար ժողովուրդ մըն են, բայց իրենց տունները վէմերու մէջ կը շինեն”։ “Ճագարները”, ըսաւ քարողիչը, “շատ տկար են. անոնցմէ մէկուն փայտի կտոր մը նետելով կրնաս սպաննել։ Բայց շատ խելացի են, քանզի իրենց տունները վէմերու մէջ կը շինեն, ուր թշնամոյն ճանկը չի հասնիր։ Աստուծոյ ժողովուրդն աշճագարներուննման է, թէեւ տկար բայց շատ

խելացի է , քանզի իր տունը յաւիտենական վէմին վրայ շինած է , և այն վէմը թրիստոս է .” Շատ աղէկ , ըսի դարձեալ մտքէս , ստուգիւ ես ալ ճագաբներուն պէս եմ : Յետոյ յաջորդ համարը կարդաց . “Մարախները թագաւոր չունին , սակայն ամէնքը գունդ գունդ դուրս կ'ելլեն :” Քիչ մը ապշած մնացի , և մինչ կը նորհէիթէ ի՞նչ իմաստ պիտի հանէր ասկէ , “Աստուծոյ ժողովուրդն ,” ըսաւ , “աշխարհիս վրայ թագաւոր չունի : Աշխարհք կը պնդէ թէ կայսրն է մեր թագաւորը . բայց կայսրը հոգեւոր թագաւոր չէ , մեր թագաւորը զօրաց Տէրն է : Մարախները գունդ գունդ դուրս կ'ելլեն , նոյնպէս Աստուծոյ ժողովուրդը գունդ գունդ կ'ելլէ : Ահա գունդ մը Երիցական հոս , գունդ մը Եպիսկոպոսական հոն , գունդ մը Մեղոտիսդ անդին , այլովքն հանդերձ : Սակայն քիչ ատենէն մեծ թագաւորը Քրիստոս պիտի գայ , և այս զատ զատ գունդերուն բոլորը մէկտեղ պիտի բերէ , և ամէնքը մէկ պիտի ըլլան , մէկ հօտ և մէկ հովիւ :” Երբ այս խօսքը լսեցի , Բարէ , գոչեցի մտքիս մէջ , ես կը բաղձամ այն մարախներէն մին ըլլալ : Բարեկամներ , Քրիստոնէից այլեւայլ բաժանումներէն շատ զգուած եմ . Երանի՛ թէ անոնց ամէնքն ալ շուտով անհետ ըլլային : Քարողիչը յաջորդ համարին

անցաւ . “ Սարդն իր ձեռքերովը պատերուն կը փակչի , ու թագաւորաց պալատներուն մէջ կը գտնուի :” Երբ կարգը սարդին եկաւ , մտքէս ըսի , Զեմ ուղեր սարդին նմանցուիլ : Բայց քարողիչը խօսքը շարունակելով ըսաւ . “Գնա արքունի պալատը , և տես հոն սարդը որ իր ոստայնին նուրբ թելովը բարձրէն կախուած արհամարհանօք կը նայի ոսկեղարդ սրահին վրայ , քանզի ինք բարձր աեղ կեցած է : Աստուծոյ ղաւկները նման ըլլալու են սարդին : Իրենց ձեռքերը վերի բարձր բաներուն , Աստուծոյ անտեսանելի բաներուն վրայ դնելու են : Յետոյ քարողիչն ըսաւ . “Ոիրելի եղբարք , կը տեսնէք որ , եթէ ճշմարտիւ Աստուծոյ ժողովուրդ ենք , նման ենք մը ջիւններու , ճագաբներու , մարախներու և սարդերու , որ փոքր բայց խելացի են :” Այս խօսքերը հոն իսկոյն գրքիս մէջ նշանակեցի , և երբ այս առտու կը յիշեմ զանոնք , այնպէս կ'օգտիմ որպէս թէ նոր կը լսեմ : Այս Աստուծածաշունչը բաւական տարիներէ ե վեր հետո կը կրեմ , և ինծի համար աւելի արժէք ունի քան բոլոր Աստուծածաշունչները որ քաղքիս մէջ կը գտնուին , և պատճառը պիտի ըսեմ : Այս Աստուծածաշունչին լուսանցներուն վրայ շատ համարներ և խօսքեր նշանակած եմ , և միշտ պատրաստ եմ քարող տալու ,

Երբ որ կը հրաւիրուիմ։ Այն համառօտ խօսքերը, զորս լրւանցքին վրայ նշանակած եմ, ինձի մէջմէկ քարող են։ Դիցուք թէ հաւատոյ, յուսոյ, սիրոյ, վաստահութեան, կամ որ և իցէ ուրիշ նիւթի վրայ պիտի խօսիմ, հոս նշանակուած համառօտ խօսքերը կը կարդամ և խկոյն բոլոր քարողը միտքս կու գայ։ Աստուծոյ զաւկները զինուորներու պէս միշտ պատրաստ գտնուելու են։ Երբ թագաւորը հրամայէ բանակն այս ինչ տեղ տանել, դորքը պատրաստ է ճամբայ ելլելու։ Բայց չենք կը ընար պատրաստ գտնուիլ, եթէ Աստուծաշշունչն աղէկ սորված չենք։ Ուրեմն, երբ աղէկ բան մը կը լսես, նշանակէ, քանզի այն որ քեզի համար աղէկ և օգտակար է՝ ուրիշին համար ալ այնպէս է։ Երկնից դրոշմը կրող դրամները շրջաբերութեան մէջ պահելու ենք արքունի դրամներու պէս։

ԳԻՐՔ ՅՈՒԹԱՅ, ԲԱՆԱԼԻ ՍՈՒՐԲ ԳՐՈՅ

Քանի մը տարի առաջ Անդ զիացի մը ինձի ըսաւ, “Մուտի, գիտա՞ծ ես որ Յորայ գիրքը բանալի է բոլոր Աստուծածաշունչին։ Եթէ աղէկ կը հասկնաս Յորայ գիրքը, բոլոր Աստուծածաշունչը կընաս դիւրաւ հասկնալ։” Ոչ, չեմ գիտեր, պատասխանեցի։ Յոք բոլոր

Աստուծածաշունչին բանալի՞ն է։ Ուստի՞ գիտես։ “Բոլոր գիրքը եօթը մաս կը բաժնեմ”, ըսաւ, “ինչպէս որ քարողիչք ընդհանրապէս իրենց քարողները մասերու կը բաժնեն։ Առաջին մասը կը ցուցնէ հարաբետալ հորդ հը որ դեռ հորածած չէ։ Սսիկա կ'ակնարկէ Աղամայ վիճակը Եղեմի մէջ։ Երկրորդ մասը կը ցուցնէ հորդ հը որ յախորդանեած փոքրուած է։ Այս փորձութեան մէջ Յոր ինկաւ, ինչպէս որ Աղամի ինկաւ Եղեմի մէջ։ Երրորդ մասը կը ցուցնէ աշխարհիս իհապատելիութ։ Երեք իմաստուն անձինք կու գան օգնել Յորայ։ Աշխարհիս իմաստութիւնն այս երեք անձանց մէջ էր։”

“Դուն չես կընար”, ըսաւ յիշեալ Անգղիացի բարեկամը, “աշխարհիս որ և իցէ մասին մէջ գտնել այս երեք անձանց նման ճարտասան և իմաստուն անձինք, սակայն անոնք չնորհաց վրայ բնաւ բան մը չէին գիտեր, վասն որոյ չկրցան օգնել Յորայ։” Այսպէս հիմա ալ մարդիկ միշտ կը ջանան մեզի օգնել, բայց ի զուր։ Տես արդի գիտունները որ շարունակ Աստուծածաշունչին դէմ կը խօսին։ Միթէ յաջողեցա՞ն աշխարհ.ք լաւագոյն ընել։ Մարդկային իմաստութիւնը չի կընար բարւոքել զմարդ։ Այն երեք անձինք ոչ միայն չկրցան օգնել Յորայ, այլ աւելի գէշցուցին անոր վիճակը։ Մէկը Յորայ այն երեք բարեկամնեւ-

բուն համար կ'ըսէ . “Առաջինը բունեց զՅոր և սարսեց , նոյնպէս երկրորդը և երրորդը , ետքը երեքը միանգամայն սարսեցին զՅոր , և երեքը միանգամայն գետին տապալեցան:” Այս բարեկամներս , շատերն այսպէս կը տապալին , երբ կը յանդգնին փաստաբանել այնպիսի բաներու վրայ զօրս չեն հասկնար: Այս տեսակ փաստաբանութիւններ անօգուտ են :

Յօր որ և իցէ նեղութեան կամ գժուարութեան կրնար աւելի դիւրաւ համբերել քան այն երեք անձանց խօսքերուն: Իր կնոջը կծու խօսքերուն կրնար համբերել մանաւանդ քան այն երեք անձանց փաստաբանութեանը: Յօր բայ գիրքին չորրորդ մասը կը ցուցնէ Գյուրդ դադասուր , որ է Քրիստոս : Հինգերորդ մասին մէջ Աստուած կը հասէ , և վեցերորդին մէջ Յօր էր Դատութան : “Ես քու վրայովդ ականջի լրով լսեր էի , բայց հիմա աչքս կը տեսնէ քեզ: Անոր համար իմ անձս կ'արհամարհեմ , հողի ու մոխիրի վրայ կը զջամ:” Ահա Յօր կը խոնարհի մինչեւ գետին և աղքեւաց մէջ կը նստի գոչելով՝ “Իմ անձս կ'արհամարհեմ”. և աւելի խոնարհելով հողյ և մոխրոյ վրայ նստած կը զջամ: Այս կը ցուցնէ թէ Յօր իր դասն աղէկ սորվեցաւ . Եօթներորդ մասին մէջ Աստուած վէրաբն կը հանեցնէ լՅոր: Փա՛ռք , բարեկամներս , չնորհաց Աստուծոյն որ մեղի ալնոյն ողորմութիւնն ըրաւ , և

ՄԵՐ ՎԵՐԶԻՆ ՎԻՃԱԿԸ ԼԱՒԱԳՈՅՆ Կ'ԸՆԷ ՔԱՆ ԶԱՌԱՋԻՆԸ

կ'ընտրեմ մանաւանդ կանդնուած մարդ մը ըլլալ Քրիստոսի հետ քան առանց Քրիստոսի Եղեմի մէջ Աղամ մը : Աղամ կրնար տասը հազար տարի Եղեմի մէջ մնալ , և օր մը Սատանան հօն գալով կրնար զանի խարել: Բայց հիմա Սատանան չի կրնար մեր վրայ գալ . մեր վիճակն հիմա լաւագոյն է քան Աղամայ վիճակը Եղեմի մէջ : Աստուած մարդուն երկրաւոր թագաւորութիւն տուաւ , և Սատանան ետեւէն գալով ըսաւ , “Ես պիտի աւրեմ ինչ որ Աստուած ըրաւ:” Բայց Աստուածնորէն ըսաւ , “ԶԱՂԱՄ և անոր սերունդը պիտի բարձրացնեմ մինչեւ Երկինք , և Սատանային զօրութիւնը պիտի խորտակեմ:” Աստուած կատարեց այս խոստումը , երբ իր Որդին մեղի համար մեռնելու տուաւ : Բարեկամներէս մին ինծի ըսաւ , “Աստուած ամէն բանին կրկինը տուաւ Յօրայ:” Այս բարեկամը կ'ըսէր թէ “Յօր չկորմնցուց իր տասը զաւկները , այլ Աստուած զանոնք Երկինք առաւ , և ուրիշ տասը զաւակ տուաւ անոր:” Այսպէս Յօր տասը զաւակ Երկինքը ունէր , տասն ալ Երկրի վրայ . բախտաւո՞ր ընտանիք : Սոյնպէս Երբ մեր զաւկները մենէ կ'առնուին , անոնք ոչ թէ կորսուած են , այլ մենէ

առաջ երկինք գացած են : Երկար խօսելու
ժամանակ չունիմ, միայն կ'ուզեմ սա խրատը
տալ քրիստոնեայ Երիտասարդաց : Թող միշտ
ջանան ըստ կարի ընկեր ըլլալ փորձառու
քրիստոնէից : Չատ կը սիրեմ ընկեր ըլլալ այն
պիսի անձանց որ աւելի բան գիտեն քան ես,
և պատեհութիւն չեմ կորսնցներ օդտակար
բան մը սորվիլ անոնցմէ : Կարդացէք և սոր
վեցէք Սուրբ Գիրքը մտադրութեամբ և ա
զօթքով, և ինչ որ չէք հասկնար՝ նշանակե
լով հարցուցէք ուրիշներուն : Երբ անգամ մը
կ'ընտելանաք հոն պարունակուած մեծամեծ
ծշմարտութեանց, շատ կը թեթեւնայ ձեր եր
կիւղն աշխարհէ, մարմնէ և Սատանայէ :



ԶԵՆՔ ԶԳԵՐ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

- 1 Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը,
Աստուածաշունչ մատեանն .
Քանզի մանկանց է առաջնորդ ,
Ծերոց ալ գաւազան :
Կանթեղ է ան . լցո փառաւոր
կուտայ մեր մութ ճամբուն .
Կը ցուցընէ փառք երկնաւոր ,
Բնակարան սիրուն :
Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը,
Աստուածաշունչ մատեանն .
Քանզի մանկանց է առաջնորդ ,
Ծերոց ալ գաւազան :
2 Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը,
Քանզի միայն անկէ
Երկնից ճամբան կրնանք գտնել ,
Փախչիլ ալ դժոխքէ :
Անոր մէջ կը կարդանք թէ ո՛վ
իշաւ հոս երկինքէն՝
Որ իր արիւնը թափելով
Մեզ ազատէ մեղքէն :
Մենք չենք ձգեր, Ա՛ :
3 Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը,
Այլ քարոզենք պիտի ,
Որ արձագանդը ազգերէն
Ծովուն անդին լսուի ,

Եւ փրկութեանը ձայնն լսեն
Մարդիկ՝ ամէն երկիր .
Մենք ալ Տէրոջը սուրբ խօսքէն
Բընաւ չենք հրաժարիր :
Մենք չենք ձդեր, Ա :

ՏՈՒՐ ԻՆՉ ՀԻՆ, ՀԻՆ ԼՈՒՐԵՐԸ

- 1 Տուր ինձ հին, հին լուրերը
Վերին անտես իրաց,
Տէր Յիսուսի սիրոյն ալ,
՚ի անոր անհուն փառաց :
Զանոնք շատ պարզ պատմէ ինձ,
Իրեւ փոքրիկ տըղու ,
Քանզի ես շատ տըկար եմ,
Անզօր իմանալու :
- 2 Տուր ինձ այն հին լուրերը ,
Տուր ինձ այն հին լուրերը ,
Տէր Յիսուսի սիրոյն վրայ,
՚ի անոր անհուն փառաց :
- 2 Զանոնք մեղմով պատմէ ինձ
Որ լաւ, լաւ հասկընամ
Զարմանալի փըրկանքը
Թերկնուստ մեղաց դարման :
Եւ շատ անդամ կրկնէ ինձ ,

Զի կը մոռնամ դիւրաւ ,
Առաւոտուս “կանուխ ցող”
Միջօրէիս կորեաւ :
Տուր ինձ այն հին լուրերը , Ա :
3 Ինձ այն հին, հին լուրերը
Փութա սիրով պատմել ,
Զի այն մեղաց տէրն եմ ես
Զոր եկն Յիսուս քաւել :
Միշտ այն հին, հին լուրերը
Կրկնէ եթէ կամիս ,
Որ ինձ վշտաց ատենը
Մըխիթարիչ լինիս :

Տուր ինձ այն հին լուրերը , Ա :
4 Տուր ինձ այն հին լուրերը ,
Վախու պատճառ երբ կայ
Թէ աշխարհիս սուտ փառքը
Հրապոյր ինծի կ'ըլլայ .
Եւ երբ փառաց աշխարհը
Հոգւոյս պիտի ծագէ ,
Տուր ինձ սա հին, հին լուրը ,
“Բըրիստոս քեզ կը փրկէ :”
Տուր ինձ այն հին լուրերը , Ա :


2194

Կ. Տ. Հայոց

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱԶԵԱՆ

1876



2136